

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Հայկական ԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կազմում 1960 թ. ստեղծվեց Հայ պարբերական մամուլի պատմության բաժինը, որի վարիչ նշանակվեց Արտաշես Կարինյանը: 1950-ական թթ. երկրորդ կեսին Կարինյանը հրատարակել էր հայ մամուլին և հրապարակախոսության պատմության հարցերին նվիրված իր երկհատոր արժեքավոր աշխատությունը («Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», հհ. 1–2, Ե., 1956–1960): Հայագիտության մեջ այն նորույթ էր՝ հիմնահարցերի լայն ընդգրկումներով ու բազմազանությամբ, որով, փաստորեն, հիմք էր դրվում հայ մամուլի պատմության հետագա ուսումնասիրությանը հայ գրականության և պատմության մեջ՝ իբրև առանձին ոլորտի:

Մամուլի պատմությունը, որպես հայագիտության առանձին բնագավառ, թելադրում էր իր առանձնահատկություններից բխող, ուսումնասիրության սեփական առարկան և մեթոդները: Գրականության հետ այն կապվում էր սոսկ մասնակիորեն, ճիշտ այնպես, ինչպես փիլիսոփայության, մանկավարժության, արվեստագիտության, տնտեսագիտության և այլ հասարակական գիտությունների հետ, որոնք կազմում են մամուլի պատմության ընդամենը բաղադրիչները և ոչ՝ ամբողջությունը: Իր ամբողջության մեջ հիմնահարցի բովանդակությունը կայանում էր այս ամենի պատմությանը, ուստի և հիմնավորված էր բաժնի տեղափոխումը Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի կազմի մեջ՝ 1965 թ.: Այդ թվականից մինչև 1984 թ. բաժնի աշխատանքները ղեկավարեց Արամայիս Մնացականյանը, 1984–1986 թթ.՝ Բագրատ Ղարիբջանյանը, 1986–1991 թթ.՝ Ռոբերտ Խաչատրյանը:

Պատմության ինստիտուտում բաժնին տրվեցին լայն հնարավորություններ՝ զբաղվելու ոչ թե մամուլում պատմության բնագավառի նյութերի ուսումնասիրությամբ, այլ որպես բուն մամուլի պատմություն՝ իր զարգացման ընթացքով, դրա առանձնահատկություններով ու օրինաչափություններով: Կարևոր էր և այն, որ հայ մամուլը սերտ աղերսներ ունի հայ հասարակական-քաղաքական մտքի դրսևորումների ու զարգացման հետ, և բացի լրատվամիջոցի իր գործառույթից, հանդես է գալիս որպես որոշակի գաղափարախոսություններ կրող և քարոզիչ: Պատմության ինստիտուտի կազմում, այսպիսով, բաժնին ունեցավ իր որոշակի ուսումնասիրության առարկան՝ հայ հասարակական-քաղաքական միտքը և այն ընդգրկող պարբերական մամուլի պատմությունը: Այս իմաստով հիմնավորված է նաև բաժնի վերանվանումը «Հայ հասարակական-քաղաքական մտքի և պարբերական մամուլի պատմության» բաժնի: Բնականաբար, վերջինիս հետազոտական տարածքն ունի համազգային ընդգրկումներ՝ աշխարհագրական և քաղաքական բաժանման սկզբունքների հիման վրա, միշտ մեկնակետ ունենալով բնաշ-

խարհը, պատմական այն իրողության հաշվառմամբ, որ հայ մշակույթը, այդ թվում և հասարակական-քաղաքական միտքը, ինչպես և մամուլը, իր հետագա զարգացումն է ապրել բնաշխարհից դուրս՝ Եվրոպայում, Մերձավոր և Միջին Արևելքում, Ռուսաստանում, Ամերիկայում և այլուր: Ըստ այդմ՝ բաժնի հետազոտություններն ընդգրկում են արևելահայ, արևմտահայ և գաղթօջախներ-սփյուռք հատվածները. այսինքն՝ այնտեղ, որտեղ հրատարակվել է հայերեն պարբերական մամուլ՝ իր ազգային քարոզչությամբ և գաղափարական ուղղվածությամբ:

Բաժնում գիտահետազոտական աշխատանքներն ընթացել են մի քանի ուղղություններով՝ ուսումնասիրվել են մամուլի առանձին օրգաններ, հասարակական և քաղաքական ուղղությունն ներկայացնող գործիչների ժառանգությունը (հաճախ՝ այս երկուսը միասին), տպագրվել են մամուլի պատմությանը նվիրված ընդհանրացնող աշխատություններ, հայ գաղթօջախների մամուլի հիմնահարցերը լուսաբանող մենագրություններ, մամուլի մատենագիտություններ և գիտական այլ երկասիրություններ:

Բաժնի աշխատանքներում հարկ է առանձնացնել հայ մամուլի պատմությանը նվիրված կոլեկտիվ աշխատությունները: Դեռևս 1963 թ. հրատարակվեց «Հայ պարբերական մամուլի պատմությունից» աշխատության առաջին մասը՝ Ա. Կարինյանի խմբագրությամբ: Ժողովածուի հոդվածները միավորում էր զուտ թեմատիկան: Դրանում զետեղված նյութերը վերաբերում են մամուլի տարբեր հարցերին: Այդ ժողովածուն մի փորձ էր մամուլի գիտական պատմության ստեղծման ճանապարհին:

Արդեն Պատմության ինստիտուտի կազմում բաժինը հասավ լուրջ հաջողությունների՝ աշխատակիցների անհատական և լուրջ հիմնահարցեր շոշափող հրապարակումներին զուգահեռ տպագրելով հայ մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմությանը նվիրված բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ:

1960-ական թթ. վերջին – 1970-ական թթ. սկզբներին բաժինն իրականացնում էր տարբեր հետազոտություններ, կատարվում էին «Հայ ազատագրական պայքարը և ազգային-դեմոկրատական մամուլը» (մաս 1-ին), «Հայ մանկական և պատանեկան մամուլի պատմությունից (1900–1920)» և այլ թեմաներ, հրատարակվեց «Հայաստանի պարբերական մամուլը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում (1941–1945)» մենագրությունը: Բաժինը տպագրության էր պատրաստել հայ պարբերական մամուլի մատենագիտական նոր, ավելի ամբողջական և ճշգրտված ցուցակը, որն ընդգրկում է 1794-ից մինչև 1970 թ. լույս տեսած ավելի քան 3000 անուն պարբերական հրատարակություն (կազմ. Մ. Բաբլոյան):

1982 թ. լույս է տեսնում «Անդրկովկասի հայկական դեմոկրատական մամուլը հեղափոխության վերելքի տարիներին (1910–1911)» աշխատությունը, որում լուսաբանվել է Անդրկովկասում, գլխավորապես Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Շուշիում լույս տեսած առաջադիմական, դեմոկրատական մամուլի դերը հեղափոխական շարժման գաղափարների տարածման գործում: Լուսաբանվել են թերթերի խմբագիրների և մի շարք հրապարակախոսների կյանքի ու գործունեության առանձին դրվագները:

1985 թ. լույս տեսած «Արևելահայ հասարակական մտքի պատմություն (1875–1900)» աշխատության մեջ նորովի և հանգամանորեն ուսումնասիրվել է դարավերջին Մոսկվայում և Պետերբուրգում լույս տեսած հայ պարբերական մամուլը, վեր են հանվել նրանց դերը տվյալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքում:

Տարբեր տարիներին բաժնում աշխատել են Մ. Մխիթարյանը, Վ. Ամիրբեկյանը, Լ. Գևորգյանը, Հ. Ֆելեքյանը, Գ. Հովսեփյանը, Ս. Իշխանյանը, Վ. Ղուկասյանը, Խ. Բարսեղյանը, Մ. Հակոբյանը, Մ. Ադանայանը, Ս. Նազարյանը, Մ. Բաբլոյանը, Գ. Դադումյանը, Մ. Թութխայանը, Ռ. Խուրշուդյանը և ուրիշներ:

Հայաստանի երրորդ Հանրապետության պատմափուլում բաժինը շարունակեց իրականացնել գիտական ծավալուն աշխատանքներ: 1992 թ. մինչև օրս բաժինը ղեկավարում է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ալբերտ Խառատյանը, ով շարունակեց իր աշխատանքը արևմտահայ մամուլի և հրապարակախոսության, հասարակական-քաղաքական կյանքի պատմության հիմնահարցերի ուսումնասիրության ուղղությամբ, մեկը մյուսին հաջորդեցին նրա արժեքավոր աշխատությունները, օսմանյան գրաքննությանը և արևմտահայ մամուլին նվիրված փաստաթղթերի մատենագիտական ժողովածուները:

19-րդ դարի արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը լրջորեն ուսումնասիրեց Մարգո Մխիթարյանը: 1994 թ. լույս տեսավ հեղինակի նույն դարաշրջանի երկրորդ կեսի արևելահայ մամուլի պատմությունն ընդհանրացնող ուսումնասիրությունը: Այստեղ ներկայացվում է «Արևելյան ծանուցմունք», «Կովկաս» և «Արարատ» պարբերականների հանգամանակից պատմությունը: Շրջանառության մեջ դրված արխիվային վավերագրերի միջոցով բացահայտվել է հայ հասարակական հոսանքների ստեղծման նախապատմությունը, ինչպես և պահպանողական հոսանքի և նրա մամուլի տեղն ու նշանակությունը: Մ. Մխիթարյանի աշխատություններն աչքի են ընկնում հասարակական-քաղաքական կյանքի հարցերի թարմ առաջադրումներով և խորագնին ու հիմնավոր ուսումնասիրությամբ:

Արևմտահայ մամուլի և հասարակական-քաղաքական կյանքի պատմության հիմնահարցերին է նվիրված ինստիտուտի կողմից հրատարակված «Հայ պարբերական մամուլի պատմություն (18–19-րդ դարեր)» (Կահիրե, 2006) մեծածավալ աշխատության 1-ին հատորը: Այն հրատարակվեց Հայկական բարեգործական ընդհանուր միության՝ Սաթենիկ Հ. Չագրը հիմնադրամի միջոցներով, բաժնի աշխատակիցներ Ա. Խառատյանի, Մ. Մխիթարյանի, Խ. Բարսեղյանի, Լ. Գևորգյանի, Վ. Ղուկասյանի, Մ. Հակոբյանի, Ս. Նազարյանի և այլոց հեղինակությամբ: Հատորը խմբագրել են Ա. Խառատյանը, Մ. Մխիթարյանը և Լ. Գևորգյանը: Իր ընդգրկումներով և մամուլի պատմության աննախընթաց չափերի գիտավերլուծական այս աշխատությունը երևույթ եղավ առհասարակ հայ մամուլի պատմագրության մեջ: Հատորն ընդգրկում է ինչպես արևմտահայ և արևելահայ, այնպես էլ հայկական գաղթավայրերի հայ պարբերական մամուլի պատմությունը: Բնութագրված են հայ լրագրության մեջ առավել աչքի ընկնող պարբերականները, բացահայտվել են նրանց տեղն ու դերը ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

Ա. Խառատյանի և Լ. Գևորգյանի խմբագրությամբ 2017 թ. վերջին լույս է տեսել նշված աշխատության երկրորդ հատորը, որն ընդգրկում է 1900–1922 թթ. ժամանակաշրջանում հրատարակված հայերեն պարբերական մամուլը. արևելահայ, արևմտահայ և գաղթօջախների ու սփյուռքի թերթերն ու ամսագրերը, այդ թվում՝ կուսակցական հրատարակությունները: Այս աշխատությամբ ամբողջանում է «Հայ պարբերական մամուլի պատմություն» երկհատորյակը՝ 1794–1922 թթ. կտրվածքով:

Բաժնի վերջին շրջանի գիտական ձեռքբերումներից են 2009 թ. լույս տեսած Մարիամ Հովսեփյանի «Կ.Պոլսի ՀՅԴ պարբերական մամուլը (1909–1924)» մենագրությունը, որում տրված է 20-րդ դարի սկզբի արևմտահայ իրականության առավել հանգուցային խնդիրների վերլուծությունը՝ ելնելով ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլում դրանց նկատմամբ դրսևորված դիրքորոշումից: Մ Հովսեփյանը 2016 թ. հրատարակեց նաև «ՀՅԴ կուսակցական և համակիր մամուլը Օսմանյան Թուրքիայում» ընդհանրացնող բնույթի աշխատությունը:

2010 թ. հրատարակվեց Լիդա Գևորգյանի աշխատասիրությամբ տպագրության պատրաստված «Գրիգոր Արծրունի. Հրապարակախոսական հատընտիր» ժողովածուն, որն ընդգրկում է Գրիգոր Արծրունու խմբագրությամբ (1872–1892) «Մշակի» էջերում հրապարակված հատընտիր հոդվածները: Դրանք ցուցադրում են նշանավոր հրապարակախոսի հասարակական-քաղաքական հայացքների ընդգրկուն և բազմազան բովանդակությունը:

Ա. Խառատյանի «Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900–1923)» մենագրության մեջ տրված են «Ժամանակ» (Կ. Պոլիս, 1909–1914), «Դաշինք» (Զմյուռնիա, 1909–1914), «Արևելյան մամուլ», «Մասիս», «Սուրհանդակ» և այլ՝ մի քանի տասնյակի հասնող թերթերի ու հանդեսների քննական տեսությունները, որոնք շեշտադրում են Աբդուլ Համիդի և երիտթուրքերի հանցագործ քաղաքականությունը արևմտահայության հանդեպ:

Մ. Եսոյանը 2015 թ. հրատարակել է «Հայկական հարցը արաբալեզու մամուլում» աշխատությունը: Ա. Կարապետյանը գիտական մամուլում հանդես է եկել բազմաթիվ հոդվածներով և հրապարակումներով, հրատարակության պատրաստել «Մկրտիչ Փորթուգալյանը և նրա «Արմենիա» լրագիրը» աշխատությունը: Լույս է տեսել Ն. Երանոսյանի «Հայկական հարցը Եգիպտոսի արաբալեզու մամուլում (1870–1890-ական թթ.)» ուշագրավ աշխատությունը: Բաժնի գիտաշխատողների մեծ մասը մասնակցել է Պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի հեղինակային աշխատանքներին:

Բաժինն այսուհետ էլ շարունակելու է հետազոտությունները հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության ասպարեզում: Դրանք հիմնականում կընդգրկեն այն թեմաները, որոնք մինչև այժմ կատարվել են բաժնում, սակայն նոր ավելի արդիական մոտեցումներով և մինչև այժմ անտեսված պարբերականների և լրագրության գործիչների ու հրապարակախոսների գնահատմամբ ու մշակությամբ ժառանգության վերհանումով: Նախատեսվում է ուսումնասիրել գաղութահայ (մինչև 1920 թ.) և սփյուռքահայ (1920 թ. մինչև դարավերջ) մամուլի երախտավորների գործունեությունը և դրա համագրային նշանակությունը:

նը ինչպես տվյալ համայնքի, այնպես էլ Հայաստանի համար: Առանձին ուղղություն կդառնա ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի հայագիտական մամուլի (տպագիր) ուսումնասիրությունը: Այն կնպաստի հայագիտության զարգացման փուլերի օրինաչափությունների վերհանմանը և ժամանակագրական ընթացքի բնութագրմանը, հայ և օտար հայագետների ներդրումների արժեքավորմանը գիտության այս ճյուղում:

Բաժնի գիտական աշխատանքներն իրականացնում են. Բաժնի վարիչ՝ գլխավոր գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ա. Խառատյան, ավագ գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Է. Ստեփանյան, պ.գ.թ. Ա. Կարապետյան, բ.գ.թ. Մ. Հովսեփյան, գիտաշխատող՝ պ.գ.թ. Մ. Եսոյան, ավագ լաբորանտներ՝ Ա. Մարանգոզյան, Ն. Հարությունյան: